ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 11, 1958 Общественные науки

Ս. Օղաբաշյան

ԽԱՉԻԿ ՍԱՄՎԵԼՅԱՆԸ ԱԶԳԱԳՐԱԳԵՏ

Խ. Սամվելյանի հարուստ և բազմակողմանի վաստակը դեռևս ըստ արժանվույն չի գնահատված։ Նրա ժառանգությունը մեծապես խթանում է ազգագրության զարգացմանը։

Այս հոդվածում մենք փորձում ենք ներկայացնել նրա գիտական մոտավոր դիմանկարը, ծանրանալով հիմնականում նրա աշխատությունների մեջ ազգագրության հետ կապված որոշ պրոբլեմների վերլուծության վրա։

Խ. Սամվելյանի առաջին իսկ գիտական հոդվածներից զգացվում է նրա լավատեղյակությունը եվրոպական և ռուսական առաջավոր գիտությանը։ Դեռևս «Հին հայոց իրավունքն ու նրա հետազոտության մեթոդը»[1] հոդվածում Խ. Սամվելյանը որոշակի վերաբերմունք է ցույց տալիս ժամանակի գիտության մեջ գոյություն ունեցող ուսումնասիրության մեթոդների նկատմամբ։ Խորանալով ազգագրության տեսական քննության մեջ, նա մերժում է թե՛ ազգաբանական և թե՛ նախապատմական մեթոդները և միակ ճիշտն ու գիտականորեն ընդունելին համարում է պատմա-համեմատական մեթոդը։ Նույն հոդվածում կիրառելով այդ մեթոդը, նա գործնականում ցույց է տալիս դրա առավելությունները մյուսների նկատմամբ։ Պատմա-համեմատական մեթոդին Խ. Սամվելյանը կրկին անդրադառնում է «Հին Հայաստանի կուլտուրան» գրքում։ Այստեղ արդեն նա ավելի ճիշտ է ըմբռնում այդ մեթոդի էությունը և այն կիրառում է ինչպես տարբեր ժողովուրդների ազգագրական համանման և զարգացման նույն մակարդակի վրա գտնվող կատեգորիաները միմյանց հետ բաղդատելու, այնպես էլ նույն ժողովրդի կյանքում դրսևորվող միևնույն երևույթը պատմական զարգացման տարբեր ժամանակաշրջաններում դիտելու առումով[2]։

1911 թ. Վիեննայում լույս է տեսնում Խ. Սամվելյանի «Հայ սովորութական իրավունքը» գիրքը, որի մեջ ամփոփված էին այդ հարցին նվիրված նրա ավելի վաղ շրջանի հոդվածները[3]։ Դրանից բացի, սովորութական իրավունքին նա անդրադառնում է նաև «Մխ. Գոշի դատաստանագիրքն ու հին հայոց իրավունքը» գրքում (Վիեննա, 1911)։ «Հին Հայաստանի կուլտուրան» գրքի առաջին հատորի երրորդ հատվածը, նույն գրքի երրորդ հատորը, «Հին հայ իրավունքի պատմությունը» գրքի մի զգալի մասը նույնպես նվիրված են այդ հարցին։

Խ. Սամվելյանի կարծիքով, սովորույթի առաջացման սկիզբը պետք է որոնել նախնադարյան տոհմային հասարակարգում։ Սակայն, հենվելով Ֆ. Էնգելսի հայտնի դրույթի վրա, նա նկատում է նաև, որ այդ վաղ ժամանակներում,

---

[1] «Ազգագրական հանդես», 1901, գր. 11-րդ։

[2] Խ. Սամվելյան, Հին հայաստանի կուլտուրան, հատ. I, էջ 15—16։

[3] Տե՛ս «Ամանդամը և գնդամը ամուսնությունն» և «Հին հայոց իրավունքը և նրա հետազոտության մեթոդները» հոդվածները, որոնք լույս են տեսել «Ազգագրական հանդեսում», առաջինը՝ 1901 թ. 12-րդ գրքում, երկրորդը՝ 1901 թ. 11 դ գրքում։

անդասակարգ հասարակության մեջ, սովորույթները դեռևս իրավաբանական առումով իրավական նորմաներ չէին, քանի որ դեռևս տարբերություն չէր դրվում իրավունքների և պարտականությունների միջև։ Իրավաբանական չափանիշները ձևավորվում են մասնավոր սեփականատիրության և մարդու կողմից մարդու շահագործման սիստեմի առաջանալու հետ միասին։ Պետական իրավունքի ձևավորումից հետո իրավաբանական չափանիշները հենվում են սովորույթի վրա, թեպետ այն ամենը, ինչ գրի է առնվում որպես օրենք, սովորութական իրավունք չէ։

Այն հանգամանքը, որ սովորութական իրավունքը մինչև XIX դ. վերջերն էլ Հայաստանում դեռևս պահպանում էր իր կենսունակությունը, Սամվելյանը բացատրում է այդ իրավունքը կրողի՝ գյուղական համայնքի կանգուն, գրեթե անփոփոխ գոյությամբ։ Իսկ գյուղական համայնքը նա համարում է նախնադարյան տոհմային հասարակարգի վերապրուկ՝ ընդունելով հանդերձ նրա՝ ժամանակի ընթացքում դասակարգայնորեն վերափոխված լինելու հանգամանքը՝։

Սովորութական իրավունքի մասին Խ. Սամվելյանի հարցադրման հետաքրքրքրականությունը այն է, որ Հայաստանում գրավոր օրենքների սակավությունն էլ նա բացատրում է սովորութական իրավունքի ընդհանրացած, հասարակական հարաբերությունների մեջ ունեցած վճռական դերով։

Այդ պատճառով էլ Խ. Սամվելյանը պատահական չի համարում գրի առնված օրենքի և սովորութական իրավունքի նորմաների նույնացումը նույնիսկ Մխ. Գոշի «Դատաստանագրքում»։

Այստեղ հնարավոր չէ մեկ առ մեկ կանգ առնել հայ սովորութական իրավունքի բոլոր չափանիշների պարզաբանման վրա, չնայած որ Խ. Սամվելյանը ամբողջովին ընդգրկել է այդ իրավունքը՝ ծիսական վերապրուկներով հանդերձ։ Անհրաժեշտ է միայն գեթ համառոտակի ծանրանալ հասարակական կյանքի մի քանի կարևոր երևույթների՝ ամուսնության, հարսանիքի, որդեծնության, ինչպես նաև հավատալիքների հետ կապված բնորոշ սովորույթների քննության վրա, որոնք առանձնապես գրավել են Խ. Սամվելյանի ուշադրությունը։

Սակայն սովորութական իրավունքի գործողության կոնկրետ միջավայրը ավելի լավ պատկերացնելու համար հարկավոր է մոտիկից ծանոթանալ հայ նահապետական ընտանիքի կամ ընտանեկան համայնքի էության հետ, մի խնդիր, որին Խ. Սամվելյանը բազմիցս անդրադարձել է, կապելով այն Հայաստանում նախնադարյան-տոհմային կարգերի գոյության հարցի հետ[2]։

Եթե սկզբնական շրջանի հոդվածներում խոսելով տոհմի և տոհմային հասարակության քայքայման հետ կապված հարցերի մասին, Խ. Սամվելյանին չի հաջողվում հարցերի նկատմամբ լիովին գիտական մոտեցում ցուցաբերել, որոշակիորեն ներկայացնել պատմական այն միջավայրը, որտեղ տեղի էին ունենում նկարագրած երևույթները, ապա «Հին Հայաստանի կուլտուրան» աշխատության մեջ նա արդեն կարողանում է հաղթահարել այդ և իր առաջ քաշած հարցերին մոտենալ պատմականորեն։

Խ. Սամվելյանը հայ նահապետական ընտանիքի մասին խոսում է տարբեր առիթներով։ Այդ հարցը նա քննության է ենթարկում սկզբնական շրջանի մի շարք հոդվածներում։ Դեռ 1908 թ. լույս տեսած «Հայ ընտանեկան համայնքը»

---

[1] Խ. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմություն, էջ 206։

[2] Խ. Սամվելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հատ. 3, էջ 51։

հոդվածում՝ փաստական նյութից արված իր եզրահանգումներն ավելի հավաստի դարձնելու համար նա օգտվում է սարքսիստական դրույթներից։ Այստեղ արդեն նա համոզված կարծիք ունի այն մասին, որ տնտեսական պայմաններով, արտադրական հարաբերություններով պետք է բացատրել հայ նահապետական ընտանիքի հասարակական կյանքի մնացած բոլոր երևույթները։ Սակայն նրա հայացքները նահապետական ընտանիքի մասին առավել ամբողջական ու ավարտուն ձևով դրսևորվում են «Հին Հայաստանի կուլտուրան» գրքում (էջ 165—204)։

Ազգագրական նյութերի հետազոտության հիման վրա Խ. Սամվելյանը եզրակացնում է, որ հայ նահապետական գերդաստանը իրենից ներկայացնում է մի ինքնամփոփ տնտեսական միավոր՝ ինքը հանդիսանալով իր արտադրանքի հիմնական սպառողը։

Խ. Սամվելյանի սկզբնական շրջանի հոդվածներում դեռ անորոշություն է նկատվում ազգագրական տերմինաբանության հարցում, երբեմն էլ որոշ ազգագրական կատեգորիաներ նա շփոթում է։ Այսպես, նա որոշակիորեն չի պատկերացնում տոհմի և գերդաստանի տարբերությունը, նախնադարյան տոհմային կարգերն անվանում է «սերնդական կազմակերպություն»։ Մի այլ տեղ նա «տանուտեր» ասելով հասկանում է ընտանիքի ավագ, մինչդեռ այդ տերմինը XIX դ. վերաբերել է գյուղի ավագին։ Սակայն այս և նման այլ անճշտությունների պատճառները (որոնց մեծ մասը նա հետագայում ուղղել է) կապված են այդ շրջանի գիտության զարգացման մակարդակի հետ։ Մանավանդ հայ ազգագրության մեջ ոչ միայն դեռևս մշակված տերմինաբանություն չկար, այլև շատ ու շատ հարցերի նկատմամբ դեռևս հստակ դիրքորոշում չէր մշակված։

Իր սկզբնական շրջանի հոդվածներում նա տնտեսական և հասարակական կյանքի շատ կողմեր, որ վերաբերում են տոհմին, վերադրում է նահապետական ընտանիքին։ Այսպես՝ թե նահապետական ընտանիքի, թե տոհմի անդամները միմյանց հետ սերտորեն կապված են համապարտությամբ (վրեժ լուծելու, պարտք վճարելու, փոխօգնության ու նման այլ հարցերում), սակայն տոհմում այդ մոմենտը այլ երանգ ունի, որը տարբերվում է գերդաստանի անդամների համապարտ պարտավորությունից։ Սակայն Խ. Սամվելյանը, XIX դ. վերաբերող նյութերը քաղելով «Ազգագրական հանդեսից», դրանց հիման վրա եզրակացություններ է անում տոհմային կարգերի մասին, երբեմն մոռանալով, որ նահապետական գերդաստանին վերաբերող իր քննարկած փաստերը տոհմային կարգերից եկած վերապրուկային երևույթներ են՝ հարմարված դասակարգային հասարակությանը։ Նյութի վերլուծմամբ նա գիտական ճիշտ եզրակացությունների չի հանգում։

Այլ կերպ է դնում Սամվելյանը նույն և նման այլ հարցեր իր «Հին Հայաստանի կուլտուրան» աշխատության մեջ։ Այստեղ արդեն նա հստակորեն դնում է ազգագրական նյութից նախնադարյան տոհմային կարգերի մասին եզրակացություններ անելու մեթոդական վտանգավորությունը և որոշակիորեն գծում է այդ նյութը օգտագործելու սահմանները[2]։

---

[1] «Արարատ», 1908։

[2] Նույն տեղում, էջ 56—59։

Հետագա շարադրանքը ավելի քան համոզիչ է այդ տեսակետից։ Խ. Սամվելյանը այստեղ արդեն աղգագրական նյութը օգտագործում է միայն նախնադարյան-համայնական հասարակության վերապրուկային արտահայտության տեսակետից։ Այս միջոցով Խ. Սամվելյանին հաջողվում է ցույց տալ այն առանձնահատուկը, որ ուներ նախնադարյան տոհմը, այն, ինչը բնորոշ էր գյուղական համայնքին։ Այդ տեսակետից առանձնակի հետաքրքրություն է ներկայանում տոհմային հասարակությանն այնքան բնորոշ համայնական աշխատանքի հասակա-սեռային բաժանման բնույթը հավաստող շատ վերապրուկային երևույթների բացատրությունը, որին Սամվելյանը միացնում է ծիսական սովորությունների մեջ մնացած այդ նույն երևույթը հաստատող շատ փաստերի բացատրությունը, այդ երևույթները դիտելով իրենց պատմական զարգացման պրոցեսում, կապելով այդ բոլորը տոհմի քայքայման սկիզբը դնող երևույթների առաջացման հետ։ Ի պատիվ Սամվելյանի պետք է ասել, որ այս հարցերի հետ կապված նա խոսում է նաև տոհմային կարգերի, գյուղական համայնքի կոլեկտիվ աշխատանքի բնույթի և սոցիալիստական գյուղի կոլեկտիվացման պատմական առանձնահատուկ տարբերությունների մասին, այդ հարցը կապելով ժամանակակից գյուղի սոցիալիստական վերակառուցման պրոբլեմների հետ, դրանով առանձնապես արդիական ու հետաքրքիր դարձնելով իր աղգագրական ուսումնասիրությունները։

Խ. Սամվելյանը՝ վերանայելով որոշ հարցերի մասին նախկինում հայտնած իր կարծիքները, նախնիների պաշտամունքի ատրիբուտը վերագրում է միայն նախնադարյան տոհմին, իր այս եզրակացությունը ամրապնդելով հնագիտական և այլ բնույթի հարուստ նյութերով։ Հայ նահապետական ընտանիքի սովորութական իրավունքում նկատվող երևույթները նա համարում է նախնիների պաշտամունքի հեռավոր արձագանքների վերապրուկներ։

Այս տեսակետից մոտենալով հարցին, Խ. Սամվելյանը քննարկում է օջախի, թոնրի հետ կապված հավատալիքները։

Հայ գերդաստանում օջախը, թոնիրը առանձին պաշտամունքի առարկա են եղել։ Օջախը ընտանիքի կենդանության խորհրդանիշն է։ Հայկական որոշ շրջաններում օջախի ամուսնությունն ավելի հաստատուն է համարվել, քան եկեղեցու. Զանգեզուրում, Լոռիում շհասության դեպքում օջախի պսակ են արել, այդ մասին Սիսիանում ժողովուրդը նույնիսկ հայտարարում է, թե թոնրի պսակը եկեղեցուց բարձր է, քանի որ նա (թոնիրը) մեզ կերակրում, տաքացնում և մաքրում է։

Ինչպես ճիշտ նկատում է Խ. Սամվելյանը, օջախի պաշտամունքը կապված է նախնիների պաշտամունքի հետ, իսկ այդ երկուսն էլ կապված են հավատալիքների ամենանախնական ձևերի հետ։

Խ. Սամվելյանը ցույց է տալիս, որ հայ նահապետական ընտանիքի համար բնորոշ է տնտեսական միավոր լինելը։ Այստեղ շարժական և անշարժ ամբողջ գույքը, արտադրության միջոցները այդ ընտանիքի ընդհանուր սեփականությունն են կազմել։ Տնտեսությունն վարելուն մասնակցել են նահապետական ընտանիքի բոլոր աշխատունակ անդամները։ Աշխատանքի բաժանման երկու ձև կա։ Ըստ սեռի՝ տղամարդիկ կատարում են դրսի աշխատանքը, կանայք՝ ներսի, ըստ տարիքի՝ թե՛ ներսում, թե՛ դրսում։ Դրսի, այսինքն՝ տղամարդկանց, աշխատանքի բաժանումը կատարում է տան նահապետը ամեն օր, երեկոյան, ըստ

սովորություն։ Ընթրիքի ժամանակ, կամ նրանից հետո, ամփոփում են այդ օրը կատարած աշխատանքը և որոշում վաղվա անելիքը։ Որոշումների մեջ հիմնական ձայնը պատկանում է տան ավագին՝ նահապետին։ Տնտեսության հետ կապված որևէ որոշում ընդունելուն կարող են մասնակցել նաև տան մյուս հասունացած անդամները։ Սակայն նրանց ձայնը վճռական չէ։ Սրանք բոլորը դրսում որևէ ճանապարհով ձեռք բերված վաստակը պարտավոր են տուն բերել և հանձնել նահապետին։ Եթե ընտանիքը բաժանվում է նահապետի կենդանության օրոք, ապա վերջինս, որ ճանաչվում է իբրև ունեցվածքի միանձնյա տնօրինողը, իրավասու է կատարել բաշխումը իր հայեցողությամբ, իսկ եթե բաժանքը կատարվում է նրա մահից հետո, ապա ամբողջ ունեցվածքը, որը դիտվում է որպես նահապետի ժառանգություն, հայտնի կանոններով բաժանվում է եղբայրների միջև։ Նահապետի իրավունքների աստիճանական սահմանափակման մեջ պետք է տեսնել նահապետական ընտանիքի քայքայման նշանները։

Նահապետական ընտանիքի ներսի գործերը կառավարում է տանտիրուհին՝ նահապետի կինը, կամ, եթե նա կենդանի չէ, ավագ որդու կինը։ Տանտիրուհու իրավունքների աստիճանական սահմանափակման մեջ նույնպես Խ. Սամվելյանը իրավացիորեն տեսնում է նահապետական գերդաստանի քայքայման նշաններից մեկը։

Խ. Սամվելյանը քննարկում է հնագույն ժամանակներից նահապետական ընտանիքին անցած այլ վերապրուկային երևույթներ ևս։ Այսպես, նա ցույց է տալիս, որ հայկական ընտանեկան համայնքը քննելիս նկատվում է նրա համար բնորոշ մի այլ գիծ ևս, որ բխում է նրա նահապետական բնույթից։ Դա տղամարդու իշխանությունն է կնոջ և հոր իշխանությունը զավակների վրա, որը դրսևորվում է բազմազան ձևերով և որի հիմքում ընկած է տանտեր-տղամարդու անսահմանափակ իշխանությունը, ինչպես ընտանիքի ունեցվածքի, նույնպես և նրա անդամների անձի վրա։ Կնոջ իրավազուրկ դրությունը հայ նահապետական ընտանիքում բխում է նրանից, որ նրա աշխատանքը անարտադրողական է համարվել և նա դիտվել է միայն որպես սերունդը շարունակելու միջոց։ Նահապետի կնոջ արտոնյալ դրությունը միայն ընտանիքի ներսում է, տնային տնտեսությունը կառավարելու հարցում։ Ժառանգության իրավունքից կինը չէր օգտվում։ Սակայն հայ իրականության մեջ մի հետաքրքիր երևույթ կար, որ պահպանվում էր սովորութական իրավունքի ուժով։ Ամուսնանալու ժամանակ, սկսած նշանվելու օրից, հարսնացուն տարբեր առիթներով նվերներ էր ստանում, որ դրամի վերածվելով, մնում էր նրա մոտ։ Այդ անձեռնմխելի դրամագլուխը կոչվում էր «արնագին» («սարմիա»)։

Սամվելյանը առավել հետաքրքրական է համարում «արնագնի» օգտագործման և ժառանգման հետ կապված սովորութական իրավունքը։ Ինչպես հայտնի է, կնոջ մահվան դեպքում «արնագինը» անցնում էր աղջիկ զավակներին և ոչ թե ամուսնուն։ Ամուսնալուծության դեպքում այն մնում էր կնոջը։ Ավելի ուշ շրջանում, նահապետական ընտանիքի քայքայմանը զուգընթաց, ամուսինը իրավունք է ստանում այդ դրամագլուխն օգտագործելու, բայց ոչ սեփականելու։ Նահապետական ընտանիքի իրավարմբռնումների հետ հակասության մեջ գտնվող այս սովորույթը հնարավոր չէ հասկանալ, եթե այն չդիտվի իբրև վաղ ժամանակների վերապրուկային արտահայտություն, երբ կինը անհամեմատ աղատ էր, իր անձի ու դույքի իրական տերը, երբ ինքն էր որոշում ամուսնության հարցը, և որից գոյացած արդյունքը բնականորեն գտնվում էր միայն ու

միայն նրա տնօրինության ներքո։ Այդ նկատի ունի Սամվելյանը, երբ արնագին-ը համարում է մայրիշխանության վերապրուկ[1]։

Տղամարդու՝ կնոջ վրա ունեցած իշխանությունից բխում են նաև նրա՝ երեխաների վրա ունեցած անսահման իրավունքները, որը դրսևորվում էր մանավանդ ամուսնության հարցում։ Հոր իշխանությունն այնքան մեծ էր, որ նրա կամքին հակառակ ընտանիքից բաժանվող որդուն հայրը կարող էր զրկել ժառանգությունից։

Հայ նահապետական ընտանիքում նահապետի անսահման իշխանության հետ է կապված մի այլ երևույթ՝ նվությունը (снохачество)։ Խ. Սամվելյանը գտնում է, որ հայկական սովորութական իրավունքում երբեմն պատահող առանձին փաստեր ցույց են տալիս, որ այդ երևույթը նախ և առաջ հեռավոր արձագանք, վերապրուկ է այն վաղ ժամանակների, երբ հայր ու որդի կարող էին մեկ ընդհանուր կին ունենալ, այսինքն՝ ընդունված էր բազմայրությունը. մայրիշխանության ուղեկիցը։

Կապելով մայրիշխանությունից հայրիշխանությանն անցնելու պրոբլեմի հետ, Խ. Սամվելյանը զբաղվել է նաև ամուսնության ձևերի հարցով։ Դեռ 1904 թ. նա հրապարակել է մի հոդված «Առևանգմամբ և գնմամբ ամուսնություն» վերնագրով[2]։ Այդ նույն աշխատանքը 1911 թ. լույս է տեսնում առանձին գրքույկով, որտեղ հարցը մշակված և լրացված է նոր նյութերով։ Իսկ արդեն «Հին Հայաստանի կուլտուրան» գրքի վերջին հատորում դանում ենք Սամվելյանի վերջնական կարծիքը այդ հարցի մասին։

Թե առևանգմամբ և թե գնմամբ ամուսնությունը Խ. Սամվելյանն իրավացիորեն վերագրում է տարատոհմ (էքսոգամ) ամուսնությանը, այսպիսով ամուսնության այդ երկու ձևերն էլ կապելով հայրիշխանության արդեն որոշակիորեն ձևավորված գոյության հետ, իրավացիորեն դանելով, որ ամուսնության այդ երկու ձևերը գոյություն են ունեցել միաժամանակ, կողք-կողքի։

Քանի որ ուղղակի աղբյուրներ չկան, որոնք հաստատեին հայերի մոտ ամուսնության այդ ձևերի գոյությունը, Խ. Սամվելյանը դիմում է մի այլ մեթոդի՝ հայ սովորութական իրավունքի մեջ պահպանված վերապրուկային նյութերի վերլուծությանը։

Քննարկելով կանոնական գրականության մեջ այդ սովորության արգելմանը նվիրված հատվածները, Սամվելյանը եզրակացնում է, որ բազմիցս այդ սովորույթի արգելմանն անդրադառնալու անհրաժեշտությունը վկայում է նրա՝ կենցաղում ամուր նստած լինելու մասին։

Նույն մեթոդով Սամվելյանը ուսումնասիրում է այդ սովորույթի վերապրուկները հայերի սովորական իրավունքի մեջ, որոնք պահպանվել են մանավանդ հարսանեկան մի շարք արարողություններում։ Գտնելով, որ համեմատական մեթոդը ամուսնության այդ երկու ձևերի առաջանալու և հաջորդականության հարցը գիտականորեն լուծելու հնարավորություն չի տալիս, Խ. Սամվելյանը իր ուսումնասիրության նյութ է դարձնում պատմական այն ժամանակաշրջանը, երբ ամուսնության այդ ձևերը հանդես էին գալիս կողք-կողքի, այսինքն՝ ավելի ուշ շրջան, երբ, ինչպես նկատում է նա, այդ երևույթները «...տի-

[1] «Արարատ», 1908, էջ 125-126։
[2] Տե՛ս «Ազգագրական հանդես», 1904, գ. 12-ը։

ռապետում էին սովորութեական իրավունքում»[1], երբ ամուսնության այդ երկու ձևերն էլ մեզ նորկայանում են վերապրուկային ձևով։

Խ. Սամվելյանը մայրիշխանությունից հայրիշխանությանն անցնելու միջանկյալ վիճակ է համարում ավունկուլատը՝ ազգագրական հարուստ նյութերի հիման վրա բացահայտելով այդ երևույթի սոցիալ-տնտեսական հիմքը։

Խ. Սամվելյանը հավաստում է տարատեղ (դիսլոկալ) ամուսնության առկայությունը Հայաստանում, ցույց տալով, որ տարատեղ ամուսնությունը մի միջանկյալ ձև է մատրիլոկալ ամուսնությունից պատրիլոկալին անցնելու ընթացքում։ Նորագույն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս հարցում էլ Խ. Սամվելյանը ժամանակին ճիշտ եզրակացությունների է հանգել։ Այսպես՝ «Очерки по этнографии Кавказа» հոդվածում[2] Մ. Օ. Կոսվենը Կովկասի ժողովուրդների ազգագրական նյութերի քննության հիման վրա հավաստում է տարատեղ ամուսնության առկայությունը նաև հայերի մոտ։ Հայերի մոտ գոյություն ունեցող այն սովորությունը, երբ նշանված ժամանակ փեսացուն գաղտնի այցելություններ է անում հարսնացուին, նա համարում է դիսլոկալ ամուսնության վերապրուկ։ Այն փաստերից բացի, որ հայտնի է Մ. Օ. Կոսվենին հայ հարսանեկան սովորությունների մասին, հատկապես «Ազգագրական հանդեսում» և այլուր կան բազմաթիվ այլ փաստեր ևս, որոնք հիմնականում օգտագործվել են Սամվելյանի կողմից։ Սամվելյանը հատուկ վերլուծման է ենթարկում հատկապես դարձի և տնփեսայության սովորութական իրավունքով ընդունված կարգը, իրավացիորեն դրանք համարելով մայրիշխանությունից հայրիշխանությանն անցման շրջանում ձևավորված սովորությունների վերապրուկ։

Սակայն այդ շրջանի սովորությունների վերապրուկներից ամենակարևորները պետք է համարել նշանից մինչև ամուսնությունն ընկած ժամանակամիջոցում ամուսնացող զույգի և խնամիների միջև գոյություն ունեցող հարաբերությունները։ Բոլոր դեպքերում էլ հայերի մոտ մինչև հարսանիքն ու պսակը չէր թույլատրվում կենակցություն տղայի և աղջկա միջև, ինչպես այդ հայտնի է կովկասյան այլ ժողովուրդների մոտ[3], նրանց խստորեն հսկում են և երբեք մենակ չեն թողնում։ Հենց այն հանգամանքը, որ ամուսնական առաջին գիշերը կուսության ստուգմամբ աղջկան հասարակական հսկման առարկա են դարձնում, արդեն խոսում է այն մասին, որ նախամուսնական կենակցությունն անթույլատրելի էր։ Կուսության ապացույցը խստորեն պահանջվում էր Ջավախքում[4], Բուլանրխում[5], Գանձակում[6] և այլ շրջաններում։ Անհրաժեշտ է այստեղ ավելացնել, որ կուսության հասարակական հսկման առարկա լինել կամ չլինելը Սամվելյանը իրավացիորեն կապում է մայրիշխանության կամ հայրիշխանության առկայության հետ։ Պետք է ենթադրել, որ հայ սովորութական իրավունքի մեջ մնացած տարատեղ ամուսնության վերապրուկները գալիս են

[1] Խ. Սամվելյան. Հայ սովորութական իրավունքը, Թիֆլիս, 1911, էջ 52։

[2] Տ'ես „Советская этнография", 1946, № 2:

[3] Տե՛ս ա) М. Ковалевский Закон и обычай на Кавказе, Москва, 1890.

բ) М. Ковалевский, Очерк происхождения и развития семьи и собственности, ОГИЗ, Москва, 1939.

[4] Տե՛ս «Ազգագրական հանդես», 1896, Ա գիրք։

[5] Նույն տեղում, 1899, Ե գիրք։

[6] Նույն տեղում, 1896, Բ գիրք։

ոչ թե նրա (տարատեղ ամուսնության) առաջացման սկզբնական, այլ վերջին շրջանից, երբ արդեն որոշակիորեն ձևավորվում էր պատրիլոկալ ամուսնությունը։

Հայկական հարսանեկան սովորույթների մեջ առհասարակ հետևողականորեն դրսևորվում է մայրիշխանական և հայրիշխանական սկզբունքների պայքարը, որը պսակվում է վերջինիս հաղթանակով։

Ամուսնության հետ կապված մի այլ կարևոր վերապրուկային երևույթի՝ օժիտի (բաժինքի) հարցի վրա է, որ առանձնակի ուշադրություն է դարձրել Խ. Սամվելյանը։

Ինչպես նկատում է Խ. Սամվելյանը, օժիտը ավելի ուշ շրջանում ձևավորված սովորություն է։ Հայկական այն շրջաններում, որտեղ գնման սովորությունը մնացել էր անհամեմատ ուժեղ վերապրուկի ձևով, օժիտը գրեթե դեր չուներ։ Այն շրջաններում, որտեղ նահապետական ընտանիքը սկսում էր նորնոր քայքայվել, հարսնացուի նվերներից գոյացած գումարով նրա հայրը պարտավոր էր օժիտ պատրաստել, երբեմն փորձելով այդ գումարից որևէ բան ետ պահել, գողանալ[1]։ Այն շրջանները, որտեղ արդեն խորացել էր նահապետական ընտանիքի քայքայումը, հարսանեկան սովորությունների մեջ օժիտը շատ կարևոր երևույթ էր դարձել։ Առաջացել էին նույնիսկ ծիսական սովորություններ, կապված հարսանիքից հետո օժիտը փեսայի տուն տանելու և հանձնելու հետ։ Իրավացի է Խ. Սամվելյանը, երբ օժիտի առաջացումը (որի հիմքում ընկած պետք է համարել արնագինը) կապում է հայրիշխանական տոհմային հասարակության քայքայման հետ։

Ի դեպ, պետք է ասել, որ հակառակ առաջին շրջանի հոդվածների, «Հին Հայաստանի կուլտուրան» գրքում երևույթները իրենց պատմական զարգացման մեջ դիտելու Խ. Սամվելյանի անվիճելի կարողության մասին են խոսում նաև օժիտի հետ կապված նրա իրավացի կարծիքները[2]։

Միջնադարյան դատաստանագրքերի ուսումնասիրությունից Խ. Սամվելյանը այն եզրակացությունն է անում, որ գլխագնի վրա հետագա շրջանում ավելացել է ընտանեկան գույքից, որ առաջ հանրային էր, աղջկան որոշ բաժին հանելու ցանկությամբ տրվող մասը։ Արդյոք հնարավոր չէ այդ «բաժնի» մեջ տեսնել հայրիշխանության հաստատման հետևանքով կանանց հանրային գույքի վրա կորցրած իրավունքները գոնե որոշ չափով պահպանելու ցանկություն։

Հայ նահապետական կենցաղում կարևոր դեմք է քավորը։ Խ. Սամվելյանը քավորի մասին խոսել է տարբեր առիթներով. նախ՝ «Ազգագրական հանդեսում» լույս տեսած հոդվածներում։ Սակայն քավորի մասին նա հիմնականում արտահայտվել է «Հին Հայաստանի կուլտուրան» գրքի առաջին հատորում։

«...Քավորի անձնավորության մեջ տեսնում ենք նախնի տոհմական ավագի, ցեղական նահապետի իշխանության կաղապարումը»,— ասում է նա։ Սամվելյանը իր առաջադրած թեզը ապացուցելու համար կառուցում է տրամաբանական հարցադրման մի ամբողջ սիստեմ։ Դա հետաքրքիր և գիտական է այն տեսակետից, որ այդ միջոցով լուսաբանվում է քավորի հետ կապված ծիսական սովորությունների ամբողջ կոմպլեքսը, սկսած դրանց առաջացման բուն հիմքից։ Սակայն վերջնական եզրակացությունն աննկատ թվում է, թե

[1] Տե՛ս Քաջբերունի, Հայկական սովորություններ, Թիֆլիս, 1903, էջ 38։
[2] Տե՛ս Խ. Սամվելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հատ. 3, էջ 128։

Խ. Սամվելյանի մոտ չափազանցության մոմենտ կա։ Կարծում ենք, սխալ է հարցադրման եղանակը, այն է՝ ցանկալ ապացուցել, թե քավորը նախկին որևէ կատեգորիայի վերակենդանացում է։ Հնագույն շրջանից եկած ամեն մի սովորություն իր վրա կրում է հետագա դարերի կնիքը, նոր սոցիալ-տնտեսական հարաբերությունների ազդեցության տակ կորցնում է հին բովանդակությունը, ձեռք բերում նորը, երբեմն պահելով հնից որևէ էական գիծ, երբեմն միայն իր նախկին բովանդակության հեռավոր արձագանքը հիշեցնող մի նրբերանդ։ Դժվար է ճշտորեն այդ բոլորը վերականգնել և որոշակիորեն տեղադրել ամենը։ Այսպես էլ, կրելով իր մեջ նախնադարյան տոհմային կարգերի և հետագա պատմական դարաշրջանների շատ գծեր, այնուամենայնիվ, քավորը նոր սոցիալ-տնտեսական հարաբերությունների հետևանքով նոր միջավայրում ձևավորված դեմք է, որ հնից բերած ծիսական պարտավորությունների հետ, հիմնականում արտահայտում է այդ նոր պահանջները, կապված նոր միջավայրին։ Պետք է ասել, որ քավորը ոչ միայն տոհմական և ստրկատիրական, այլև ֆեոդալական ժամանակաշրջանի հատկանիշների վերապրուկներ ունի իր մեջ։

Վերջին հարցը, որի մասին անհրաժեշտ ենք համարում մի երկու խոսք ասել, նահապետական ընտանիքի քայքայման խնդիրն է և Խ. Սամվելյանի վերաբերմունքը այդ երևույթի նկատմամբ։

Նահապետական ընտանիքի քայքայման հետևանքով անհատական ընտանիքների առաջացման հարցը Խ. Սամվելյանի կողմից հատուկ ուսումնասիրության առարկա չի դարձել։ Սկզբնական շրջանի հոդվածներում կանգ առնելով այդ հարցի վրա հարևանցիորեն, նահապետական ընտանիքի քայքայման մասին նա ավելի մանրամասն խոսում է «Հին Հայաստանի կուլտուրան» գրքում[1]։

«Ազգագրական հանդեսի» նյութերը թեպետ ուղղակիորեն չեն խոսում նահապետական ընտանիքի քայքայման տնտեսական պատճառների մասին, այնուամենայնիվ, հնարավորություն են տալիս տեսնելու այդ երևույթի տնտեսական պատճառները։ Խ. Սամվելյանը նկատել է, որ այդ գործոններից մեկը՝ նահապետական ընտանիքի ներսում աշխատանքի բնական բաժանման սկզբունքը, ժամանակի ընթացքում դառնում է նրա քայքայման պատճառներից մեկը։ Արտադրողական ուժերի զարգացման հետևանքով, աշխատանքի բնական բաժանման սկզբունքը անբավարար է դառնում, իսկ նահապետական գերդաստանի ներսում աշխատանքի հասարակական բաժանման համար դեռևս պայմանները չէին հասունացել։ Այս կապակցությամբ Խ. Սամվելյանը խոսում է նաև նահապետական ընտանիքի քայքայման այլ պատճառների մասին։

Ապա Խ. Սամվելյանը նկատում է, որ նահապետական ընտանիքի քայքայման հետևանքով առաջացած անհատական ընտանիքների հիման վրա առաջանում է գյուղական համայնքը, որ այստեղ կապող օղակը ոչ թե արենակցական ազգակցությունն է, այլ արտադրական-տնտեսական փոխադարձ կախվածությունը, որի ուժով էլ նա դառնում է տերիտորիալ համայնք։ Գյուղական համայնքի մասին Խ. Սամվելյանը միայն հարևանցիորեն խոսում է «Հին Հայաստանի կուլտուրան» գրքում[2]։

---

[1] Խ. Սամվելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հատ. 3, էջ 194—204։
[2] Նույն տեղում, էջ 204—221։

Այսպիսով կարելի է մոտավորապես ընդգրկած և ամփոփած համարել ազգագրությանը վերաբերող այն հիմնական հարցերի շրջանակը, որոնք Խ. Սամվելյանի ուշադրության կենտրոնումն են եղել նրա գիտական գործունեության ամբողջ ընթացքում և որոնք նա հետևողականորեն մշակել է՝ որքան որ այդ հնարավոր էր իր ժամանակի գիտության մակարդակի տեսակետից։

Խ. Սամվելյանը բեղմնավոր գիտական գործունեություն է ունեցել։ Նա խորապես ուսումնասիրել է հայ ժողովրդի հին և միջին դարերի պատմությունը, հայ իրավունքի պատմությունը ազգագրությունը, հնագիտությունը, դրամագիտությունը, վիմագրությունը և այդ ամենի հիման վրա սիստեմավորել ու ամբողջացրել է հայ հին կուլտուրայի պատմությունը։ Սա հենց Խ. Սամվելյանի ամենամեծ ծառայությունն է հայագիտությանը։

Օժտված լինելով մեծ էրուդիցիայով, նա առաջ է քաշել մի ամբողջ շարք հարցեր և հիմնավորապես լուծել դրանք, մի շարք հարցեր նրա կողմից միայն դրվել են։ Սամվելյանը ժամանակակից գիտության մեջ արծարծված ընդհանուր դրույթների իրավացիությունը հավաստել է հայ ժողովրդի հասարակական կյանքի և կուլտուրայի պատմության ուսումնասիրությամբ։ Բոլոր դեպքերում Խ. Սամվելյանի ժառանգության արժանիքներից մեկը պետք է համարել նաև համեմատական ազգագրության նյութերից և նվաճումներից օգտվելու մեծ հմտությունը։

Եթե գործունեության սկզբնական շրջանում իր ազգագրական ուսումնասիրությունների մեջ Խ. Սամվելյանը օգտվում էր հիմնականում ազգագրական նյութից, ապա նույնը չի կարելի ասել նրա գործունեության վերջին շրջանի մասին։ Նրա գիտական եզրահանգումները հենվում են աղբյուրագիտական բոլոր կարգի նյութերի վրա՝ հնագիտական, մատենագրական, ազգագրական, բանահյուսական և այլն։

Գործունեության դեռևս սկզբնական շրջանի հոդվածներում արդեն երևում է Խ. Սամվելյանի քաջատեղյակությունը եվրոպական և ռուսական առաջավոր գիտությանը։ Այդ բանը ավելի ակնհայտորեն երևում է նրա վերջին շրջանի հանրագումարային աշխատանքների մեջ։ «Հին Հայաստանի կուլտուրան» գրքի առաջին հատորի մեջ նա մանրամասն աղբյուրագիտական տեղեկություններ է տալիս քննարկվող պրոբլեմի մասին, ընդգրկելով ժամանակի պատմագրության վերջին խոսքը, հաճախ, սակայն, խիստ քննադատական, ուրույն մոտեցում ցուցաբերելով օգտագործած գրականության նկատմամբ։

Հետագայում մարքսիստորեն օգտվելով պատմա-համեմատական մեթոդից, Խ. Սամվելյանը հասել է ուսումնասիրության կոմպլեքսային մեթոդի կիրառելու հնարավորությանը։

Եթե սկզբնական շրջանի ուսումնասիրությունների համար բնորոշ է մարքսիզմի առանձին դրույթներից օգտվելու ձգտումը միայն, ապա անժխտելի է, որ սովետական շրջանում գրված հանրագումարային աշխատանքների մեջ Խ. Սամվելյանը մարքսիստական աշխարհայացքի տեսակետից է ձգտում մոտենալ իր առաջ դրված գիտական պրոբլեմների լուծմանը։ Խ. Սամվելյանի գիտական ժառանգությունը պահպանում է և ցույց իր նշանակությունը։